№ 103 Յունիսի 19 (Յուլիսի 1) **1880** Յունիսի 19 (Յուլիսի 1) № 103

ԻՆՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլ. կէս տարվանը 6 ռուբլ. Առանձին համարները 5 կոպէկով։

Թիֆլիսում գրվում են միայն խմբագրատան մէջ։

Օտարաքաղաքացիք դիմում են ուղղակի *Типограф. Редакція „Мшакъ"*

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ (Ինչի կիրակի և ազգ օրերից)

Հայտարարութիւն ընդունվում է ամէն լեզուով։

Հայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր բառին 2 կոպէկ։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Ներքին տեսութիւն։ Մի հաղորդութիւն։ Նամակ պաղարչապատից։ Նամակ Բլուր գիւղից։ Նամակ խմբագրին։—Արտաքին տեսութիւն։ Անգլիական պարլամենտը։ Ֆոնսխա։ Ալբանցիների գրութեան մասին։ Նամակ Թիւրքիայից։ Նամակ Պարկուտանից։—Հայտարարութիւններ։

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՄԻ ՀԱՂՈՐԴՈՒԹԻՒՆ

Թիֆլիսի արական (կլասիկական) գիմնազիայի գրիչկատորը պատիւ ունի յայտնել հասարակութեանը, որ ներկայ ուսումնական տարին Թիֆլիսի գիմնազիայի մէջ հասուցանելեան հարցաքննութեանը նեղարկվեցան ընդամենը 28 անձ, որոնցից 27 աշակերտ գիմնազիայի VIII դասատան և մի մասնաւոր անձ (Մանվելով)։ Սրանցից միայն մի աշակերտ չարժանացաւ հասուցանելեան վկայականի և մընաց VIII դասատան մէջ միւս տարվայ համար։ Բոլոր մնացածները արժանացան հասուցանելեան վկայականի։ Ահա սրանք են. 1) Ալէքսանդր Բուտլերին, Ասարխանից, ռուս, 2) Դաւիթ Գեգիսանով, Մանդլիսից, վրացի, 3) Թաչատուր Դէլյարլանով, Երևանից, հայ, 4) Նիկոլայ Եգորով, Զալալ-Օղլից, ռուս, 5) Մարգարէ Զաքարով, Դանձակից, հայ, 6) Պետրոս Քալանթարով, Երևանից, հայ, 7) Կոնստանտին Համբնեցկի, Բանենդրոլից ռուս, 8) Պետրոս Գոլչէնսկի, Թիֆլիսից, ռուս, 9) Մարգարէ Կարապետով, Գորուց, վրացի, 10) Աբրահամ Լեմիցով, Նդնախից, հայ, 11) Ասլիլ Լսոկով, Ալավիանակից, ռուս, 12) Գէորգ Լսոկով, Ալավիանակից, ռուս, 13) Ալէքսանդր Մանվելով, Գորուց, հայ, 14) Ալէքսանդր Մելիքով, Պետրովսկից, վրացի, 15) Մայսէյ Մարգարով, Թիֆլիսից, հայ, 16) Լեվ Մարգարի, Թիֆլիսից, ռուս, 17) Նիկոլայ Սասի, Ալէքսանդրապոլից, ռուս, 18) Կարապետ Սահակով, Նախիջևանից, հայ, 19) Նիկիտա Տանդով, Ղազարից, հայ, 20) Նիկոլայ Տէր-Գէորգով, Դանձակից, հայ, 21) Սայմոն Տէր-Զուլուով, Թիֆլիսից, հայ, 22) Նիկոլայ Նեղովին, Բեսարաբիա Նաչանից, ռուս, 23) Միխայլ Մարգիսով, Թիֆլիսից, վրացի, 24) Մարտիրոս Ելիզարով, Երևանից, հայ 25) Գասիլ Իւրքովին, Վէլմարից, ռուս, 26) Թրիսանթար Թաչատուրով, Նուշաց, հայ և մասնաւոր անձն Զասիլ Մանսկեսով Թիֆլիսից, վրացի։

Վերոյիշեալներից երկուքը մեդալներ ստացան. Տանդով, հայ, ոսկէ, Լսոկով, ռուս, արծաթէ։ Արքունական սոփեսնդիայի կանոնադասներ վից հոգի են ներկայացրած մանկավարժական խորհուրդից. 1) Գեղեմանով, իրաւաբանական ֆակուլտետի համար, 2) Կոստանդինի, մասնամասիական, 3) Կամենեցկի, 4) Տէր-Գէորգով, 5) Զարիով և 6) Մարգիսին, չորսն էլ բժշկական ֆակուլտետի համար։ Բացի այդ Գէորգ Լսոկով առաջարկված է Պետերբուրգի Գիշերօթիկան ֆակուլտետի սոփեսնդիայի։ Գէորգ Լսոկովի, Կոստանդինոսի, Տէր-Գէորգովի և Կամենեցկու համար միջնորդվում է արքունական օգնութիւն տալ ճանապարհածախսի համար։ «Թիֆլիսի գիմնազիայի կարօտ աշակերտներին օգնող ընկերութեան գումարից մատուցված է դրամական օգնութիւն տալ հետեւեալ կերպով. 1) Վասիլի Լսոսովին 150 ր., 2) Զարիովին 100 ր. 3) Մուրդինին 100 ր., 4) Մարիանուն, եթէ սոփեսնդիա չը ստանայ, 200 ր.։

ՆԱՄԱԿ ՎԱՂԱՐՇԱՊԱՏԻՑ

Մարիսի 16

Ամսոյս 6-ին, առաւօտեան Վաղարշապատի խաժամուտ ամբոխը, փողոցներում վազվզելով, գոռում էին՝ «Փոխնին հաց չի թխում... մենք սոված կը մեռնենք... սարքի (պատճառ) տունը քանդուփ... և այլն։ Այս խառնիճաղանձ ամբոխի մէջ երևում էր և մեր ամենի ուշադրութիւնը իր վրա գրաւող պ. Եղիազարեանցը։ Սա էլ իր կողմից էր աղաղակում ասելով «Ախպէր, տունս քանդուեց... օրէնք 150 ռուբլ վնաս ունեմ.... ով ուզումա թող գայ, իմ փուռս էլ կը տամ իրան, աւիւրս էլ, ամեն բանս էլ...թաք հոգիս ազատուի, մարմինս հանգստանայ... էս ինչ կրակի ու պատի մէջ ընկայ... ֆունտը 10 կոպէկով էլ ինձ հաց ծախելը ձեռք չի տալիս... և այլն։ «Մշակիչ յարգելի ընթերցողները գուցէ կը յիշեն, որ այս պարոնը այն երեսի եղիազարեանն է, որը Վաղարշապատի ամբողջ փուռները կապալով վերցրել է և միայն մէկ փուռն է բանեցնում, և այսպիսով հացի մնավանդութիւնը իր ձեռքն է ձգել։ Ամեն ոք հետաքրքրվում էր իմանալ այս գոռում, գոչումների պատճառը։ Վերջապես իմացվեցաւ որ տեղւոյս հաշտարար դատաւորը դատի է ենթարկել պ. Եղիազարեանին, նկատելով նորա քանի մի տեսակ խարդախութիւններ, այսինքն հացի չափազանց հում ու անմաքուր լինելը և կշռի ու քարերի անճշտութիւնը և այլն։ Դատաւորից վրէժխնդիր լինելու համար պ. Եղիազարեանը մի քանի որ հաց չը տուեց թէ վաղարշապատի հաստարակութեանը և թէ նոյն իսկ հաշտարար դատաւորին։ Բացի դրանից նա իր յանախորդներին զրգռեց, որ խմբովին դիմեն հաշտարար դատաւորի մօտ և նրանից հաց պահանջեն, որպէս զի նա նեղն ընկած, չը չարունակի իր քննութիւնը, և ինքն էլ մի և նոյն ժամանակ հացի գինը ուզածին չափ բարձրացնի։ Բայց այս անգամ նա սխալվեցաւ, որովհետև դուռս եկան ժողովրդի մէջից մի քանի անձինք, և ներկայանալով պ. դատաւորին, յայտնեցին թէ իրանք կը տան ժողովրդին հաց, ֆունտին մի կոպէկ պակասով։ Սորա համար էլ առաջարկեցին օրինաւոր դրաւական, խոստանալով մի և նոյն ժամանակ զոյցած օգուտը զոր ծաղրել բարեգործական նպատակով։ Ժողովվեցաւ մեծ բազմութիւն և հասարակական վէճռ (мирскій приговоръ) կայացրին. այսպէսով պ. դատաւորի կարգադրութեամբ և ամբողջ գիւղի համաձայնութեամբ հացի փուռը պ. Եղիազարեանցի փոխարէն յանձնվեցաւ մի քանի պարիներին որ նրանք վաճառեն ֆունտը 8½ կոպէկով Ղազարից և նոյն օրը սկսեցին իրենց պատրաստութիւնը տեսնել, ծախքեր անել հիմնելով հասարակական վճռի և պ. դատաւորի կարգադրութեան վրա թէ՝ այլ ևս ոչինչ արգելք չէ կարող պատահել։ Բայց ինչ եղաւ. Սորա երկրորդ օրը պ. Եղիազարեանը ուզարկում է դատաւորի մօտ մի ուրիշ մարդ պ. Գ. Մարխասեանցին, ինքն իրեն հրամայված ձեռնելով, և պ. դատաւորին խոստանալով, թէ ֆունտը 8 կոպէկով կը վաճառի, այն ինչ 2 օր առաջ աղաղակում էր փողոցներում, թէ 10 կոպէկով վաճառելով մեծ վնաս է կրում և այլն։ Պ. դատաւորը, հաւատալով յիշեալ պ. Մարխասեանցի խոստմանը զանձնեց հացի մնավանդութիւնը նորան։ Սա Թիֆլիսից 3 ֆուրգոն ալիւր էր բերել տուել վաճառելու համար, բայց տեսաւ, որ իր ալիւրները չէ կարողանում վաճառել չափազանց վատ և դաղը լինելու պատճառաւ, վերջապես սա էլ սկսեց օգուտ աղել ողորմելի գիւղացիների գրութիւնից, միայն Եղիազարեանցի հետ և սորա փոնում չարունակից հաց վաճառելը։ Բայց չուտով հանգամանքները փոխվեցան։ Եղիազարեանի երկու հրամայները բանտարկվեցան տեղւոյս հաշտ. դատաւորի օգնականներին կարգադրութեամբ վերև յիշած յանցանքների համար. իսկ յիշեալ պ. Մարխասեանցն էլ իր երեք ֆուրգոն ալիւրները տաղաւելուց յետոյ, յայտնեց թէ այլ ևս չէ կամենում հաց վաճառել—ձեռք չէ տալիս։ Այժմ ահա երկու օր է, որ հարիւրաւոր մարդիկ հաց չեն գտնում գնելու։

Այս տարվայ ցանքերի սաստիկ առատութիւնը մեծ յոյսեր է տալիս տեղական բնակիչներին. 20—25 օրից յետոյ կարելի է Արարատեան դաշտում հունձք սկսել։ Ցորենի տէրերը իրենց ամբարները բաց են արել, այն ինչ մտադրվել էին խալվարը (30 պ.) 300 ռուբլով վաճառել՝ այժմ 80 ր. էլ են աղաչում։ Գիւղացիք այժմներս փողոտերից իւրաքանչիւր խալվարի (30 պ.) համար 25—30 ռուբլի փող են վերցնում, որ հնձից յետոյ ցորենն տան փողի տեղ։

Վաղարշապատի տանուտէրը, որ հրամայեցրած էր իր գործած անթիւ զանգատութեանց ու թուլութեանց համար, այժմ տանուտէրական նշանը կրկին հետ ստացաւ և չարունակում է իր պաշտօնը։ Սորա պատիժը եղաւ միայն մի չարաթով հրամայվելը պաշտօնից։

***

ՆԱՄԱԿ ԲԼՈՒՐ ԳԻՒՂԻՑ

21 մայիսի

Անցեալ տարուան արմտեաց թերի գալուն համեմատ այս տարի անցեալ տարուան պակասը լցնելու չափ առատութեանց հունձք կը խոստանայր ողջոյն Արարատեան դաշտի ցանքը, ոչ պակաս երևոյթ ցոյց տալով և լեռնային տեղեաց բուսաբերութիւնքը։

Բայց կարծես թէ երկինքն խանդալով երկրի այս կանաչազարդ բարեբախտութեանը, կամեցաւ հարուածել նորա հպարտութեան կարծիքը, չիրութեան մէջ ձգելով իր ներ ի բնակչաց մտքերն իրենց այս երջանիկ նպատակին հասնելու քայլափոխութեան մէջ, և թէ ինչ կերպով. ամառասիկ եղելութեան հանգամանքներն։

Մայիս ամսոյ իսկ երրորդ օրն, ժամը 2 ին (ալա ֆրանկայ) Մասխի կողէն սեւագոյն ամպ մի եալ հանգամանք դիրք բռնելով դէպի արևմուտք, յաճախ խաղալով յուզելն որոտմունդով և սուլպ փայլատակելով, և երբ 2—3 ժամու չափ տեղ նստն ուզղ։ Սեւամբ առաջ գնաց Հաքեանց լեռանդաշտուց կողը քերելով, յանկարծուտ հարաւային կողմն փոխարէն մի եալ և ամպերի երանանը դէպի հիւսիս դարձուց Սանթի գաւառի դաշտավայրեաց վրա, տեղալով նմանը չը տեսնուած յորդութեամբ անձրև և կարկուտ դեռ նոր ի ներոյ հասկերը պոկեալ ցանքերու վրա, այնպիսի սաստկութեամբ, որ գաշտի վրա գտնուած մարդ, անասուն մոլորեցան իրանց ճանապարհէն, դէպի գեղերը փախչելու։

Փոթորկիս փարատուելէն զկնի դիտուեցաւ, տեսնուաւ որ փոթորկիս անցած տեղերը ցանքի չչմաք չէ մնացած. ամպրոպի հարուածած տեղի երկայնութիւնն 4 ժամու չափ տեղ, և լայնութիւնն մէկ ժամու, ամենէն բերրի և արգաւանդ արտօրէից վրայէն անցանելով, կարկուտը իւր մեծութեան սովորականէն դուրս կարելի է ընկուզի մեծութեամբ գիրգաած տեսնուաւ գետնի վրա։ Քամու սաստկութիւն նմանապէս անօրինակ, այնպէս որ կարկէտէ հարուածեալ ցորենաբոյսերը ներերոյթ եղած էին, յայս սատիճան որ տեսնողին երևում էր, թէ այստեղ բնաւ ցորեն չէ ցանուած, ծառերի ոստերը օդի մէջէն տեղէ ի տեղ էին քշվում, միաձամուռ ցորեն, գարի, հաճար, առաւոյտ, խաղող և ծառապտուղ բոլորը փոթորկի բռնութեան զոհ դնացին, և այս անակնկալ դիպուածին ենթակայ եղան մեծին տասնի չափ գեղեր, վեցը հայազգի, և չորսը Թուրքաբնակ. վերոյիշեալ գիւղերի յանգոց մէջ չորրորդը խաչառ վնասվեցաւ, և մէկ չորրորդն էլ բան մնանելայ կերպիւ։

Այս փոթորկիս մէկ զարմանալի հետեւանք թողած է, որուն խելք հասցնելը բնաւիրաց կը վերարերի. փոթորկիս անցած տեղէն մղձնելով հեռու, ուր բնաւ կարկուտ չէ դիպած բացի անձրէէն, ցորեան արտերի մէջ գտնուած տարեկանը, չափառը, որ արդէն չափն առած և ծաղկի է, առանց կարկուտ դիպչելու և կոտրվելու չորացել են, և հատուփուտ էլ ցորենի հասկեր, որուն ոսմիկները երկնային ցասման մէկ պատիժ են համարում. բայց ըստ մեզ ուրիշ բան չէ, եթէ ոչ երկարականացեալ ամպերի մէկ հեռանքը, որ կայծակելով արծարծվելու և այդ բուսերին ազդեր է, ըստ որում վնասուաց հասկերէն մէկ սա հնան է բուրում, ինչ որ կայծակը զարկած նիւթերէն, այսինքն վառօդի հոտ նման մէկ անախորժ հոտ։

Այս երկնաւոր հարուածով բազմաթիւ հոգաւոր գերդաստաններ ձեռնթափ լինելով առաջիկայ կալի և հնձոց ակնկալութիւնէն, ձեռն ի ծոցի յուսակտուր լքան մնացին, ի վերջոյ ուրիշ մէջոյ մտածել չը կարողանալով, գիմեցին տեղական տեսչութեան և յայտարարութիւն տուին, յորմէ այս յուսադրական պատասխանին ընկալան յարգանուտ կրտեակ բերել տալով հարուածեալ ցորենների տեղերը սերմանելով, առաջիկայ տարուան պարէն յուսալ։

Փոթորկի այս նիւթական վնասէն աւելի բարոյական վնաս առաջ եկաւ այն կարգի հասարակութեան, որը հաց գնելու պարտաւորուած էին, մանաւանդ Վաղարշակերտու գաղթականներին և թափառական մարդկանց։ Գանի որ ցանքերի այս յայտոյ երևոյթով սկսել էր սովի խստութիւն մեղմանալ, ցորենի խալվարն 150 ռուբլ, 100 կամ 90 ռուբլ իմնալ, այս Ֆախտալով զեպքով կրկին ահի և զղջի մէջ ընկան բոլորն էլ, խիթալով մի գուցէ վերակրկնուի ասեղիչ փոթորկիս։ Այսպէս միապէս վնաս պատճառեց այս անօրինակ դէպքն ունեցողներին և մնացածներին չուենցողներին։

Արարատեան դաշտը չրջապատող լեռանց գագաթունքը դաշտէն հեռու գտնուելով, կարկտաբեր ամպեր քիչ անգամ կը հասնեն դաշտի վրա, այս է պատճառն որ խիստ ասարիկակ կը թուի այս կարկտի հոսմունքը։ Այս դաշտը երաշտութիւնեան չի վախնար չնորհիւ երանելի անուանգրի հոսանքին, ուստիկ անթիւ առուներով այդ և յանեան կոռնդուի ողջոյն դաշտը, մարախն էլ, որչափ կը յիշուի, մինչեւամ հիրամ է Արարատին գանձակի վերայով գալով 1847 թուականին, սորա համար է որ Արարատեան ախարիը մինչ ամ վրա, այս է պատճառն որ խիստ ասարիկակ կը թուի այս կարկտի հոսմունքը։ Այս դաշտը երաշտութիւնեան չի վախնար չնորհիւ երանելի անուանգրի հոսանքին, ուստիկ անթիւ առուներով այդ և յանեան կոռնդուի ողջոյն դաշտը, մարախն էլ, որչափ կը յիշուի, մինչեւամ հիրամ է Արարատին գանձակի վերայով գալով 1847 թուականին, սորա համար է որ Արարատեան ախարիը մինչ ամ նեցուկ հանդիսացած է ուրիշ հեռաւոր դաշտանգաց, և այս անգամ ես ամենն կարմիրէ թափած են ոչ միայն Արարատի բնիկ ուրիշ, այլ քուրդ, ասորի ևս խումբ խումբ գաղթում են Երևան, և գրեթէ բոլորն էլ ապրում են մուրալով քան թէ ուրիշ միջոցաւ։ Այսու չընդանչարիկի յատկութեամբ վնասում է Արարատեան ախարիս մայր լինել բոլոր Հայաստանին ի հարկաւոր դէպս սնունդ տալով իր մտաւոր և հեռաւոր ոգրդ, ինչպէս բարոյապէս նոյն և նիւթապէս։

Գէորգ քահանայ Յովհաննէսեան

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐԻՆ

Թիֆլիս, 16 մայիսի

Ձեր պատուական լրագրի էջերէն տեղեկանալով վասպուրական երկրի մեր արիւնակից հայ եղբարց սովի պատճառաւ կրած վիշտը և տառապանքը, և մինչև իսկ անօթի մեռնելը, մեր հայ անունը